# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 մայիսի 2020 թվականի N 125-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 130-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «հա» ենթակետերով՝

***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի հիսուն տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների տնօրենների վարձատրության ամսական չափը, լրավճարների չափաքանակները, վճարման պայմանները սահմանելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2019 թվականի փետրվարի 14-ի N 15-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 130-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

23.05.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Հ. Պողոսյան

2020թ. մայիսի 23

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2020 թվականի մայիսի 23-ի
N125-Ա որոշման

«Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019 թվականի դեկտեմբերի 25-ի
N 130 -Ա որոշման

## Սյունիքի մարզպետարանի համակարգի հիսուն տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների տնօրենների վարձատրության ամսական չափը

| N/N | Կազմակերպության անվանումը | Տնօրենի ամսական աշխատավարձի չափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 912 000 |
| 2 | «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 842 000 |
| 3 | «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 565 000 |
| 4 | «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 565 000 |
| 5 | «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ | 500.000 |
| 6 | «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ | 500"000 |
| 7 | «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ | 398.000 |

»:

5/23/2020

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ